ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/54

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.02.2019թ. թիվ 26/26/3221-19 գրությամբ «Զորաշեն» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01227621/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.02.2019թ. թիվ 01-14/263 գրության հիման վրա, 28.02.2019թ. նախաձեռնել է «Զորաշեն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն 14.02.2019թ. թիվ 01-14/263 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի պարագաների ձեռքբերման նպատակով 18.01.2019թ. հայտարարվել է «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» էլեկտրոնային աճուրդ:

Նշված ընթացակարգի մասնակից «Զորաշեն» ՍՊԸ-ն 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Մասնակցից պահանջվել է ներկայացնել ապրանքների տեխնիկական բնութագրերը: Վերջինս դրանք ներկայացրել է, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բնութագրում կա անճշտություն , վերջինիս արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով տրվել է մեկօրյա ժամկետ ներկայացված տեխնիկական բնութագրերը շտկելու նպատակով: «Զորաշեն» ՍՊԸ-ն շտկման արդյուքնում ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին:

Գնահատող հանձնաժողովը որոշում է ընդունել մերժել «Զորաշեն» ՍՊԸ-ին նշված չափաբաժինների մասով»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Զորաշեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «Զորաշեն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.02.2019թ. թիվ 26/26/3221-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.02.2019թ. թիվ 26/26/3221-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն 14.02.2019թ. թիվ 01-14/263 գրությունը, «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» էլեկտրոնային աճուրդ գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 30.01.2019թ. նիստի թիվ 2, 05.02.2019թ. նիստի թիվ 3, 08.02.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Զորաշեն» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 1-ից 11-րդ չափաբաժինների մասով:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի՝

- 4-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Դիալիզատոր FX-8» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.4 (+-0.1)մ 2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 185մ կ մ +-10%, լցման ծավալը մինչև 100մլ, մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ:

Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր»:

- 5-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Դիալիզատոր F-7HPS» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները «գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6 (+-0.1)մ 2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ +-10%, լցման ծավալը մինչև 100մլ, մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր»:

- 6-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Դիալիզատոր F-8HPS» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.4 (+-0.1)մ 2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ +-10%, լցման ծավալը մինչև 120մլ, մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր»:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 30.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Աճուրդի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից

է ճանաչվել «Զորաշեն» ՍՊԸ-ն՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնժողովը որոշեց ծանուցել կազմակերպություններին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ:

«Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել Հավելված 3-ով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«4-րդ չափաբաժին. «Դիալիզատոր VitaPES 140, Serumwerk, Serumwerk Bernburg Vertriebs GmbH, Գերմանիա, Դիալիզատոր VitaPES 140, գերզտման գործակիցը մինչև 17մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.4 մ 2, թաղանթի հաստությունը 35 մկմ, ներքին տրամաչափը 200 մկմ, լցման ծավալը 83մլ, մանրէազերծման մեթոդը՝ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայություն:

5-րդ չափաբաժին. «Դիալիզատոր VitaPES 160, Serumwerk, Serumwerk Bernburg Vertriebs GmbH, Գերմանիա, Դիալիզատոր VitaPES 160, գերզտման գործակիցը մինչև 19մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6 մ 2, թաղանթի հաստությունը 35 մկմ, ներքին տրամաչափը 200 մկմ, լցման ծավալը 91 մլ, մանրէազերծման մեթոդը՝ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայություն:

6-րդ չափաբաժին. «Դիալիզատոր VitaPES 140, Serumwerk, Serumwerk Bernburg Vertriebs GmbH, Գերմանիա, Դիալիզատոր VitaPES 140, գերզտման գործակիցը մինչև 17մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.4 մ 2, թաղանթի հաստությունը 35 մկմ, ներքին տրամաչափը 200 մկմ, լցման ծավալը 83 մլ, մանրէազերծման մեթոդը՝ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայություն»:

Այնուհետև, 05.02.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «Զորաշեն» ՍՊԸ-ին տրամադրել մեկօրյա

ժամկետ ներկայացված տեխնիկական բնութագրերում շտկումներ իրականացնելու համար: Մասնավորապես, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերով սահմանված է, որ Serumwerk Bernburg Vertriebs GmbH արտադրողի կողմից VitaPES 140 և VitaPES 160 դիալիզատորները մանրէազերծվում են գամմա ճառագայթմամբ, սակայն ըստ կատարված ուսումնասիրությունների վերոհիշյալ դիալիզատորների մանրէազերծումը կատարվում է այլ մեթոդով: Ինչպես նաև, ներկայացված չէ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելիության հավաստումը:

Հանձնաժողովն առաջարկել է ընկերությանը.

1. Շտկել անհամապատասխանությունը կամ ներկայացնել արտադրողի կողմից հաստատված հիմնավորում ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

2. Ներկայացնել VitaPES 140 դիալիզատորների Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելիությունն ապացուցող հիմնավորում՝ հաստատված սարքերն արտադրողի կողմից:

Ընկերությունը 06.02.2019թ. Հանձնաժողովին ուղղված գրությամբ նշել է հետևյալը. «Առկա է բժշկական նշանակության արտադրատեսակներիռադիացիոն մանրէազերծման միջպետական ստանդարտ ГОСТ8.651-2016, որի համաձայն բժշկական նշանակության արտադրատեսակները մանրէազերծվում են գամմա ճառագայթմամբ և բետտա արագացված էլեկտրոններով»:

08.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Զորաշեն» ՍՊԸ-ից պահանջվել էր հավաստում առ այն, որ իր կողմից ներկայացված պարագաները համատեղելի են Fresenius Medical Care 4008S սարքի հետ սարքերն արտադրողի կողմից տրված հավաստման միջոցով, հաշվի առնելով պահանջի կատարման անհնարինությունը, գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել չդիտարկել պահանջի կատարումը և այս մասով հայտերը գնահատել բավարար:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր տեխնիկական բնութագրով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նշել է արագացված էլեկտրոններով մանրէազերծում, ինչը չի

համապատասխանում պահանջվող տեխնիկական բնութագրին, և որոշում է կայացվել, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Զորաշեն» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Որպես արձանագրված անհամապատասխանություններն ապացուցող փաստաթուղթ Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացվել է քաղվածք VitaPES 140 և VitaPES 160 դիալիզատորների օգտագործման հրահանգից, որտեղ որպես սարքի մանրէազերծման մեթոդ նշված է արագացված էլեկտրոններով մանրէազերծման մեթոդը (Electron Beam):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

• 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

• 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Զորաշեն» ՍՊԸ-ն «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-19/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Աճուրդի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- 05.02.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովի կողմից «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերով սահմանված է, որ Serumwerk Bernburg Vertriebs GmbH արտադրողի կողմից VitaPES 140 և VitaPES 160 դիալիզատորները մանրէազերծվում են գամմա ճառագայթմամբ: Սակայն, ըստ Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության, վերոհիշյալ դիալիզատորների մանրէազերծումը կատարվում է այլ մեթոդով: Միաժամանակ, Ընկերության կողմից չի ներկայացվել Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելիության Հրավերով պահանջվող հավաստումը:

- Հանձնաժողովն առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան շտկումներ:

- 08.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր տեխնիկական բնութագրով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նշվել է արագացված էլեկտրոններով մանրէազերծումը, ինչը չի համապատասխանել պահանջվող տեխնիկական բնութագրին: Ըստ այդմ, որոշում է կայացվել 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Զորաշեն» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- Բողոքներ քննող անձին Պատվիրատուի կողմից ներկայացված VitaPES 140 և VitaPES 160 դիալիզատորների օգտագործման հրահանգից քաղվածքում որպես սարքի մանրէազերծման մեթոդ նշված է արագացված էլեկտրոններով մանրէազերծման մեթոդը (Electron Beam):

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ Հրավերով սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերությունը՝ Աճուրդի հրավերի թիվ 1 դիմում-հայտարարությամբ հայտարարելով և հավաստելով, որ իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի

(ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.02.2019թ. թիվ 26/26/3221-19 գրությամբ «Զորաշեն» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01227621/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Զորաշեն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ